

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀՈՂԻ ՍԵՐԸ

ԵՐԵՎԱՆ



2016

ՀՏԴ 821.19-1 Սարգսյան

ԳՄԴ 84 (5Հ)-5

Ս 259

## **Գիրքը տպագրվել է Վահրամաբերդի գյուղապետարանի աջակցությամբ:**

### **Հարություն Սարգսյան**

Ս 259 Հողի սերը: Բանաստեղծություններ / Սարգսյան Հարու-  
յուն. - Եր.: Արմավ հրատ., 2016.- 64 էջ:

Հեղինակն իր բանաստեղծություններում բնության գեղեցիկ  
պատկերներով մարդկային նուրբ ու անեղծ ապրումներն է խտաց-  
նում: Կյանքի գունագեղությունը և հոգևոր հարուստ լիցքերը ներկա-  
յացվում են մարդ-բնություն անբակտելի կապով:

ՀՏԴ 821.19-1 Սարգսյան

ԳՄԴ 84 (5Հ)-5

ISBN 978-9939-863-33-7

© Սարգսյան Հարություն, 2016

© «Արմավ», 2016

# ԳԱՐՈՒՆ

Շուտով գարուն կգա,  
Զնծադիկ ու վարդեր,  
Հովիվն, իր հոտն առած,  
Կելնի կանաչ հանդեր:

Կքչքչա առուն՝  
Դաղձն հոտավետ ափին՝  
Երգ ու ծիծաղ խառնած  
Արտի շող ու ծափին:

Կգա անուշ անձրև,  
Ու կպայթի բողբոջ,  
Պաղ աղբյուրի ակից  
Կգա հազար խխտջ:

Կծանն աչքով կանի,  
Թարմ եղինջի մի փունջ  
Բարակ մեջքին առած  
Ճերմակափայլ խխունջ:

Հարս ու աղջիկ դաշտում  
Ծիլ բանջար կգոգեն,  
Դարձի հոգնած ձամփին  
Աղբյուրին կչոքեն:

Տուն կդառնան սիրով  
Արագիլ ու կռունկ,  
Հողից դուրս կցցվի  
Նորաբողբոջ մի սունկ:

Գարնան անուշ բույրից  
Կլավանան վերքեր,  
Անկուշտ սիրտս նորից  
Կծնի նոր երգեր:

## ԵՍ ԴԱՐՁԱ ՀԻՍՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ

Ես արդեն կարծրացել, ամրացել եմ կարծես.  
Դարձել եմ հիսուն տարեկան,  
Կորցրել եմ ու փնտրել, փնտրել եմ ու գտել  
Թշնամի, մտերիմ, բարեկամ:

Հասցրել եմ տառապել, հոգս ու երգ կառապել,  
Անցել եմ աղետ, պատերազմ,  
Բովվել եմ ես մարտում, հուշեր կան իմ սրտում,  
Դեռ ուժեղ եմ, հպարտ, անրակազմ:

Հաղթով եմ դարձել տուն, բեկոր կա իմ բազկում,  
Դարձել եմ հիսուն տարեկան,  
Իմ ձերմակ մազերից, իմ տնկած վազերից  
Կաթում է լուսաշող ապագան:

Սահում եմ ես առաջ՝ հուշ, երազ իմ սրտում,  
Հասակով հիսուն տարեկան  
Ու թաղել եմ հերթով մայր հողի սուրբ կրծքում  
Օրերն իմ, տարիներն հերթական:

Արածս ծանր է իմ չարած գործերից,  
Ես նոր եմ սկսում ափսոսալ,  
Սակայն որ դարձել եմ ես հիսուն տարեկան  
Չեմ ուզում այդ մասին փսփսալ:

Ուզում եմ զիլ գոռալ, թող աշխարհն իմանա,  
Որ դարձա հիսուն տարեկան,  
Հեռանում եմ դանդաղ տարիներն իմ անցած  
Ամեն օր, ամեն ժամ ու վայրկյան...

## ԵՄ ԻՆՉ ԵՄ ԳՏԵԼ ՔՈ ՄԵԶ

Տնակս դատարկ ու լուռ,  
Ես՝ տխուր, աչքս ձամփա,  
Կարոտից դարձա մի բուռ,  
Միրուցդ ես խենթացա:

Դաշտ ու ձոր դեղին հագան,  
Ամառը թռավ, գնաց,  
Քո սերը աշուն դարձավ,  
Անձրևը աչքիս մնաց:

Կարոտդ մնաց սրտիս,  
Հոգուս՝ մեջ կրակ հրկեզ,  
Փչում է աշնան քամին,  
Երգեր եմ գրում ես քեզ:

Աղոթք եմ անում, հոգիս,  
Ճամփիդ եմ սպասում անվերջ,  
Մեկ-մեկ էլ ինձ հարց եմ տալիս,  
Թե ի՞նչ եմ գտել քո մեջ:

## ԱՆՆԱՆ ԻՆՉՊԵՄ ԵՍ ՄԱՅՐ ԱՍԵՄ

Մայր, ինձ ծնիր աշնան ցավով,  
Ավանդ, մայր, քեզ Աստված տարավ,  
Ինձ խղճացին անձրև, մշուշ,  
Քո տեղ աշունն ինձ մայր դարձավ:

Մթնշաղը հեքիաթ պատմեց,  
Ջերմ գուրգուրեց սարի քամին,  
Խրատներիդ ծով պակասից  
Մոլորվեցի ձանապարհին:

Արցունքներս խանգարեցին,  
Որ տարբերեմ չարն ու բարին,  
Մառախուղը օթևանեց  
Իմ անցնելիք ձանապարհին:

Ես մնացի տխուր, մեռակ,  
Մայրս ծնեց, թողեց, գնաց,  
Աշունն հազար վառ գույներով  
Կյանքիս ձամփին հավերժ մնաց:

Մայր, ինձ ծնիր աշնան ցավով,  
Յավս երգով ինչքան բուժեմ,  
Ինչպե՞ս փարվեմ աշնան կրծքին,  
Աշնանն ինչպե՞ս ես մայր ասեմ:

## ՄԻՐԻՐ ԱՌԱՋՎԱ ՊԵՍ

Սիրի՛ր, սիրի՛ր դու ինձ այնպես, առաջվա պես,  
Առաջվա պես լցո՛ւն հոգիս սիրո բույրով,  
Շուրթս այրի՛ր տաք համբույրով,  
Զգա՛ն, գրկի՛ր, ջերմ գուրգուրի՛ր առաջվա պես.  
Ախր ես դեռ սիրում եմ քեզ,  
Այնպես, ինչպես դեռ չի սիրել և ոչ ոքի և ոչ ոքու,  
Զի տրաքվել երբևիցե ուրիշ գրկում ձիչն իմ հոգու,  
Զի ժպտացել ուրիշ մի կին իմ սիրային ջերմ խոսքերից,  
Զի ջերմացել ուրիշ ոչ ոք իմ կրթերից,  
Ուրիշ ոչ ոք  
Դեռ չի լսել իմ չորացող շրթունքներից՝ սիրում եմ քեզ,  
Միայն քեզ եմ ասել անուշ խոսքերն այդ ես:  
Սիրում եմ քեզ առաջվա պես այնքան ուժգին, այնքան հրկեզ,  
Որ այդ սիրուց գժվել եմ ես:

## ԵՍ ՈՒ ՈՒՌԵՆԻՆ

Ծիածանվում եմ արցունքներն աչքիս,  
Իսկ սարից փչող զեփյուռը գարնան  
Գույները առել, տանում է հեռուն:  
Գետը վարարել, ելել է ափից  
Ու հանդգնել է գրկել, համբուրել բունը ուռենու:  
Ոռին վարսերով շոյում է առվին:  
Գարնան զեփյուռն է իմ թաց աչքերին,  
Ու ինձ թվում է, թե երկվորյակ ենք  
Ես ու ուռենին:

## ՄԱՅԻՆ ԻՆՉ ՀԵՏ

Կապույտ երկնքով լուռ, շարան-շարան,  
Հարավ չվեցին երգերը հոգուս  
Անդարձ ու անհետ:  
Անտեր մնացին ձորում քարքարոտ  
Ուրցը, մասրենին, մայրամախտոր,  
Աղբյուր, արահետ:  
Խռովեց սիրուս ծաղկած պարտեզը.  
Տերևաթափ է. թառամեց, լացեց  
Վարդը հոտավետ:  
Գիշերն իջեցրեց քողն իր անթափանց  
Տենչն արշալույսի ու քո կարոտը  
Մնացին ինձ հետ:



## ԻՆՁ ԱՇՈՒՆՆ Է ԾՆԵԼ

Ինձ աշունն է ծնել անձրևոտ,  
Կգնամ նրա հետ ես անդարձ,  
Սրտումդ թե ծնվի մի կարոտ,  
Չսպասես, ես չունեմ վերադարձ:

Աշունն է տիրակալն իմ կյանքի,  
Ես գերված կգնամ նրա հետ,  
Իմ հետքից քեզ համար կթողնեմ  
Մի փափուկ տերևոտ արահետ:

Աչքերիս փոխարեն քեզ համար  
Այսուհետ անձրևը կլացի,  
Ես չունեմ քո կյանքում վերադարձ,  
Թեկուզև սրտիդ դուռը բացվի:

Թեկուզև ես գարունն եմ սիրում,  
Ինձ աշունն է գերել, շատ է ուշ,  
Քեզ նվեր այս վարդերն եմ թողնում  
Թերթերում անթափանց մի մշուշ:

Դեղնաշունչ աշունն է ինձ ծնել,  
Ու նրա գերին եմ ես հավետ,  
Բայց մի օր քեզ ինձ մոտ կբերի  
Մի փափուկ տերևոտ արահետ:

## ՔՈ ԳԻՐԿԸ ԿԱՆՉԻ

Դու մի ամպ դարձիր, երբ գարունը գա,  
Սրտիս սև հողը պիտի կանչի,  
Ծիածանի թաց գույներով շողա,  
Որ հոգուս արտը արագ կանաչի:

Ի՞նչ գարուն առանց կանաչ արտերի,  
Բողբոջի նման բացվիր, սիրելիս,  
Թե բույր չլինի վարդ ու կակաչի,  
Անհամ կլինի միտքը երգերիս:

Արևի շողի նման դու փայլիր,  
Առավոտյան պաղ շաղի պես շողա,  
Մաքուր երգերիս խորքերը մտիր,  
Ու գարունը թող քո տեսքից դողա:

Առունների պես հոսիր, քչքչա՛,  
Աղբյուրների պես անուշ կարկաչիր,  
Երգիս տողերը ան տաք շուրթերիդ  
Ու ինձ կարոտով քո գիրկը կանչիր:

## ԱՇՈՒՆ

Աշուն, պաղ աշունն է եկել,  
Փչում է քամին դառնաշունչ,  
Պարում են երկնքում մշուշոտ  
Մի երազ դեղնաշունչ, մի անուրջ:

Եղյամն է համբուրում տերևին,  
Թափվել են թերթիկները վարդի,  
Մերկացած կանգնել են գետափին  
Մի ուռի, սլացիկ մի բարդի:

Խավար են շողերը արևի,  
Ջեն սփռում համբույրներ ջերմանուշ,  
Դեղնաշունչ դաշտերին է իջել  
Թաց աշնան անթափանց մի մշուշ:

Աշուն, պաղ աշունն է եկել,  
Փչում է քամին դառնաշունչ,  
Ու սրտիս խորքերն է նա լցնում  
Մի կարոտ, թախծալի մի մրմունջ:

## ԳՈՒՑԵ ՆԵՐՈՒՄ ԲԵՐԻ

Դու նստած ես կողքիս ու լռում ես այնպես,  
Ինչպես մաքուր տետրը բանաստեղծի,  
Ես կսպասեմ, այնքան մինչև գրիչը քո  
Լսված, չմոռացված երգեր գրի:

Դու հոժար ես կրկնել սիրո կրքոտ մի խոսք,  
Գուցե դա քեզ կամ ինձ ներում բերի,  
Բայց վիրավոր մի սեր, որ լքված է վաղուց,  
Այդպես՝ խոսքերով չի բոցավառվի:

## ԿՅԱՆՔԻՍ ՄԵԿ ՕՐԸ

Այսօր հոգիս կուչ է եկել,  
Մի ցավ տանջում է այսօր,  
Կիսատ-պռատ գործ եմ թողել  
Կամ թե մի այց կարևոր:

Գուցե մեկին չեմ բարևել  
Կամ նայել եմ ծուռուժուռ,  
Սիրտս այսօր շատ է ցավում,  
Կծկվել, դարձել է մի բուռ:

Ի՞նչ եմ թողել երեկ թերի,  
Ո՞վ է ինձնից նեղացել,  
Ցածրացել եմ ես անտեղի,  
Սիրտս ումից է վշտացել:

Երգս եմ թողել ես անավարտ,  
Թողել արտս անվարել,  
Ծարավ թողել բուստան ու արտ,  
Ոչինչ դեռ չեմ ամբարել:

Մի ընկերս շատ էր հիվանդ,  
Զգնացի նրա մոտ,  
Մորս այսօր չեմ այցելել,  
Աչքը մնաց ինձ կարոտ:

Չեմ հասցրել պատասխանել  
Զինվոր որդուս նամակին,  
Էն ոչխարն էլ արոտ գնաց՝  
Արնոտ տիզը դմակին:

Հնձած խոտը ծղոտ դարձավ-  
Չհասցրի հավաքել,

Կարտոֆիլն է կարմրին տալիս,  
Բզեզով է վարակվել:

Օրը մի բուռ, օրը շատ կարձ,  
Գոնե լիներ հարյուր ժամ,  
Չես հասցնում աչքդ թարթել-  
Իրիկուն է, տարածամ:

Մեկ սերմացուն է պակասում,  
Մեկ անբերրի է տարին,  
Ջուրը ունի ոսկու արժեք,  
Ապրանքդ՝ շան մսի գին:

Դեռ աչքերդ նոր են բացվել,  
Մեկն հողին է, մեկն՝ Աստծուն,  
Դաշտ են գնում հարս ու աղջիկ,  
Տոպրակում հաց ու մածուն:

Է՛, գյուղացու օրը մեռնի,  
Օրն էլ օրի նման չէ,  
Ո՛չ ժամ գիտի, ո՛չ պատարագ,  
Մեկ մշակ է, մեկ՝ չարչի:

Այսօր հոգիս կուչ է եկել,  
Այնպես հոգնած եմ այսօր,  
Կիսատ գործեր դեռ շատ ունեմ,  
Մեկը մեկից կարևոր:

## ՔԵԶ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՐ ԵՄ ԳՐԵԼ

Այս վանքը իմն է, սիրելիս,  
Մատուռը ձեռքովս եմ շարել,  
Այս հազար մոմերը վառվող  
Քո սիրո լույսով եմ վառել:

Այս դաշտը իմն է, սիրելիս,  
Կրծքի մեջ ցորեն եմ ցանել,  
Ամեն մի բառը շաղ տալիս  
Քեզ համար աղոթք եմ արել:

Աղբյուրը մեծ քարի տակին  
Շոգին ծարավից եմ շինել,  
Ու ամեն աղբյուր գնալիս  
Մի բուռ էլ քո տեղն եմ խմել:

Գիշերը իմ օրն է բացվող,  
Ես այնքան արթուն եմ մնացել,  
Աստղով ու լուսնյակով զարդարված  
Քեզ թաքուն երգեր եմ գրել:

## ՀԵՌԱՅՈՂ ՍԻՐՈ ԱՇՈՒՆ

Սիրո հուշերով, վարդի փշերով  
Աշունը ծնեց լուսեղեն մշուշ,  
Թաց, թևասլաց փչեց ցուրտ քամին.  
Արդեն շատ է ուշ:

Ոսկեցոյք դաշտին իջավ մառախուղ,  
Տխրամած մթին,  
Աշնանամուտ է, մութը փաթաթվեց  
Իմ կարոտ սրտին:

Դու գլուխն էիր հեռուն թևածող  
Զվող երամի,  
Քեզ շանթը այրեց, թե՛ կծու խոսքը  
Իմ բարեկամի:

Գիշեր է մռայլ, պաղ ու դեղնաշունչ,  
Բայց արթուն եմ ես,  
Գուցե գիշերն այս անուշ երագով  
Ինձ մոտ բերի քեզ:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԱՐՈՒՆ .....	3
ԵՍ ԴԱՐՁԱ ՀԻՍՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ .....	4
ԵՍ ԻՆՉ ԵՄ ԳՏԵԼ ՔՈ ՄԵՉ .....	5
ԱՆԵԱՆՆ ԻՆՉՊԵՍ ԵՍ ՄԱՅՐ ԱՍԵՄ .....	6
ՍԻՐԻՐ ԱՌԱՋՎԱ ՊԵՍ .....	7
ԵՍ ՈՒ ՈՒՌԵՆԻՆ .....	7
ՄԵԱՅԻՆ ԻՆՉ ՀԵՏ .....	8
ԻՆՉ ԱՇՈՒՆՆ Է ԾՆԵԼ .....	9
ՔՈ ԳԻՐԿԸ ԿԱՆՉԻ .....	10
ԱՇՈՒՆ .....	11
ԳՈՒՅԵ ՆԵՐՈՒՄ ԲԵՐԻ .....	12
ԿՅԱՆՔԻՍ ՄԵԿ ՕՐԸ .....	13
ՔԵՉ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՐ ԵՄ ԳՐԵԼ .....	15
ՀԵՌԱՅՈՂ ՍԻՐՈ ԱՇՈՒՆ .....	16
ԿԳԱ ՆՈՐ ՏԱՐԻՆ .....	17
ԳՅՈՒՂՍ .....	18
ՁՅՈՒՆԵ ԱՇՈՒՆ .....	20
ԳՈՒՅԵ ԶՂՁԱՍ .....	21
ՍԻՐՈ ՎԵՐՁԻՆ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ .....	22
ՍԻՐՈ ԳԱՐՈՒՆԸ .....	23
ՇՈՒՏ ԵԿԱԾ ԾԵՐՈՒԹՅՈՒՆ .....	24
Ա՞Խ, Ի՞ՆՉ ԿԼԻՆԻ .....	25
ԿՈՐԱԾ ՍԵՐ .....	27
ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ .....	28
ԱՇՆԱՆ ԳԱՆՈՒՍՏ .....	29
ԹՈՂ ԵՍ ՓՈԹՈՐԿՎԵՄ ԱՆՅՅԱԼԻԴ ՅԱՎՈՎ .....	30
ՄՍՏՈՅԻՆ .....	31
ԱՐՓԱՉԱՅԻՆ .....	32
ՄԱՍԻՍ .....	33

ՀԱՅԱՍՏԱՆ, ՄԱՅՐ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ	35
ՎԵՐՋԻՄ ՄԱՐՏԸ	36
ՀԵՏՔԵՐ ԿԱՆ ԱՐՅԱՆ ԱՆՏԱՌԵՐՈՒՄ ԽԻՏ	37
ՊԱՊԻՍ ԿՏԱԿԸ	39
ԵՐԱՆԻ	40
ԹԱՐԹԱՌ	41
ԾԵՐՈՒԹՅԱՆ ԳԱԼԻՔԸ	42
ԻՆՉՊԵՍ ՄԱՅՐՍ ԿՈՒՋԵ	43
ՄՈՐՍ ԱԳՈԹՔԸ	44
ԱՌԱՎՈՏ ԼՈՒՍՈ	45
ՀԵՌՎՈՒՄ ԱՄՊ Է ԳՈՌՈՒՄ	46
ՄԱՅՐՍ ԻՄ ՄՈՐ	47
ՅՈՐԵՆ ԳԱՇՏԻ ՄԻՋԻՆ	47
ՄԵԽՎԵԼ Է ՕԴՈՒՄ ՄԻ ՀՍԿԱ ԱՐԾԻՎ	48
ՉԿԱ ՆԵՐՈՒՄ	49
ՀԻՎԱՆԴԱՆՈՅՈՒՄ	50
ԵՍ ԱՆՄԵՂ ԵՄ	51
ԺԱՅՈՒՆ ՄԱՍՈՒՐ ԾԼԱՎ	52
ԱՅՍՕՐ ԼՈՒՍՆՅԱԿԸ ԻՆՉ ՀՅՈՒՐ Է ԵԿԵԼ	53
ԻՋՆԵՄ ԱՐՓԱՉԱՅԻ ԱՓԻՆ	54
ՅՈՐԵՆ ԳԱՇՏՍ	55
ՄՈՐՍ ՀԻՇԱՏԱԿԻ	56
ԳԱՐՈՒՆ	57
ՎԱԽ	58
ԾԱՂԿԻ ՄԵԿ ՕՐԸ	59
ԴՈՒ ԱՅՍՕՐ ԻՆՉ ԿԱՐՃ ԵՍ ՀԱԳԵԼ	61

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ  
ՀՈՂԻ ՍԵՐԸ

АРУТЮН САРКСЯН  
ЛЮБОВЬ ЗЕМЛИ

Խմբագիր՝ Անդրանիկ Կարապետյան  
Սրբագրիչ՝ Ռոզա Հովհաննիսյան  
Ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի  
Համակարգչային շարվածքը՝ Նունե Նիկողոսյանի

Չափար՝ 60x84 1/16  
Թուղթը՝ օֆսեթ 80գ/մ<sup>2</sup>  
Ծավալը՝ 4.0 տպ. մամուլ  
Տառատեսակը՝ Ghabuzian Gohar  
Տպաքանակը՝ 200  
Գինը՝ պայմանագրային  
Տպագրվել է «Նովել հրատարակչություն» ՍՊԸ տպագրատանը  
Հասցե՝ Ք. Երևան, Մայիսի 9-ի փ. 23



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.  
հեռ.՝ 34-73-35  
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.  
тел.՝ +374-10-34-73-35  
Email: armav-hrat@mail.ru